## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5*

**№ ԴԴ-3-** Ը-7591

**«03» դեկտեմբերի 2014 թ.**

**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9>> ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

Հարգելի մասնակից,

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/9-02»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով, ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 15-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Մ.Հայրապետյանը (հեռ. 010 511 788, 010 511 787):

Հայտերը կբացվեն 2014թ. դեկտեմբերի 15-ին, ժամը 11:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրասենյակային գույքի /չհրկիզվող պահարաններ/ ձեռքբերումը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ գրասենյակային գույքի /չհրկիզվող պահարաններ/ (կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

***Միաժամանակ հայտնում ենք, որ՝***

***1.«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը կներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:***

***2. <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/9-02>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրով նախատեսված է կանխավճար, ինչով պայմանավորված՝ ընտրված մասնակիցը նախապես՝ մինչև պայմանագիր կնքելը, պետք է ներկայացնի կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով /երաշխիքի ձևով/:***

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ datgnumner@mail.ru:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝** **ՌՇՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ**

Կատ. Նյութատեխնիկական ապահովման վարչության
գնումների համակարգման բաժին
Հեռ. 511-788, 511-787